

## Մոնթրեալահայությունը անգամ մը եւս առաջնորդեց «Մարդկութեան համար քայլարշաւ»ը



Կարդալ էջ 6

[www.horizonweekly.ca](http://www.horizonweekly.ca)

CONNECT WITH US:

- facebook.com/pages/horizonweekly
- @horizonweekly
- horizonweekly

### Ողջերթ շէնքապան Արմէն Եկանեանի



Կարդալ էջ 4

**2017**  
**CR-V**  
 STARTING FROM  
**\$26,890\***

**HONDA**  
**GABRIEL**

7000, boulevard Henri-Bourassa E.  
 Montréal-Nord, QC H1G 6C4  
**514 327-7777**  
[www.hondagabriel.com](http://www.hondagabriel.com)  
 < OPEN SATURDAYS >

**Kevork Asadourian**  
**Vahan Vartanian**  
**Haig Khobasarian**

\*Conditions apply. Taxes not included. Freight and air taxes not included. Limited time offer applicable on selected models only and subject to change or cancellation without notice. For more information, visit Honda Gabriel.



MARCHÉ

# ADONIS

Un univers de fraîcheur



Donnez une touche  
*méditerranéenne*  
à vos BBQ en famille !

*Give a mediterranean touch  
to your BBQ with the family!*

[www.groupeadonis.ca](http://www.groupeadonis.ca)

Suivez-nous



# COME HEAR WHAT YOU HAVE BEEN MISSING



**TRY HEARING AIDS  
RISK-FREE**

Call 416 754-4327



699 Coxwell Avenue  
Toronto, ON M4C 3C1  
Tel: 416 463-4327(HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Road  
#65 Toronto, ON, M1R 4B9  
Tel: 416 754-4327(HEAR)

[www.hearingaidsource.ca](http://www.hearingaidsource.ca)

- Free Hearing Tests
- No obligation Hearing Aid Trial
- Hearing Protection



Images copyright Oticon Canada Ltd.



## hearing aid source

*invisible, custom & comfortable*



# ՀՄԸՄ Գանատայի շրջանի 42-րդ Աերկայացուցչական ժողով

ՀՄԸՄ Գանատայի շրջանի 42-րդ ներկայացուցչական ժողովը տեղի ունեցավ 5-7 Մայիս 2017-ի շաբաթավերջին, Մոնթրեալի Ս. Յակոբ եկեղեցու «Աւետիս Ահարոնեան» սրահին մէջ: Ժողովին ներկայ էին ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան անդամ եղբ. Մոսիկ Թոփուզեան, ՀՅԴ «Արարատեան» Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչը, ՀՄԸՄ-ի Արեւելեան Միացեալ Նահանգներու, ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութեան, Համագրայինի Գանատայի Շրջանային վարչութեան, Գանատայի Թեմի Ազգային վարչութեան, ՀՅԴ ԳԵՄ-ի Կեդրոնական վարչութեան ներկայացուցիչները, ՀՄԸՄ Գանատայի Շրջանային շրջանաւարտ վարչութեան անդամները, ՀՄԸՄ Գանատայի Շրջանային Խորհուրդի ներկայացուցիչը, ՀՄԸՄ Գանատայի Շրջանային վարչութեան կողմէ հրահրեալներ եւ ՀՄԸՄ Գանատայի մասնաճիւղերէն (Մոնթրեալ, Լաւալ, Թորոնթօ եւ Գեմպրի) 38 լիազօր ներկայացուցիչներ: Ժողովը հիւրընկալող մասնաճիւղն էր Մոնթրեալի ՀՄԸՄ-Կամբը:

Ժողովին բացումը կատարեց ՀՄԸՄ Գանատայի Շրջանային շրջանաւարտ վարչութեան ատենակապետ եղբ. Հրաչ Նաճարեան, ապա ընտրուեցաւ

առժամեայ դիւան, որ ստուգեց լիազօրագրերը: Ժողովին օրինականութիւնը հաստատուեցին ետք, ներկայացուցիչները միաձայնութեամբ ընտրեցին մնացուցիչ դիւանը. ատենակապետներ՝ եղբ. Վահան Չալիքեան եւ եղբ. Սամսոն Քահաքէճեան, ատենակապետներ՝ քոյր Յոլեր Մկրտիչեան եւ եղբ. Վարդան Քարկոցեան: Ենթակա նիստերուն ընթացքին դիւանը ճիշդութեամբ եւ կանոնադրային ժողովական օրէնքներուն համաձայն վարեց ժողովը: Առիթը ընծայուեցաւ լսելու մասնաճիւղերուն ամփոփ տեղեկագիրները եւ համաձայն ՀՄԸՄ Գանատայի Շրջանային վարչութեան երկամեայ գործունէութեան ու մասնաճիւղերու ներկայացուած տեղեկագրերուն, ՀՄԸՄ Գանատայի Շրջանը ունեցած է բազմաբեղուն գործունէութիւն:

Շաբաթ առաւօտեան, ժողովականները մէկ վայրկեան յոտնկայ լուծութեամբ յարգեցին յիշատակը մեզմէ առյաւել բաժնուած վաստակաւոր անդամներուն՝ եղբ. Բիւզանդ Թորիկեանի եւ եղբ. Միհրան Երմիլեանի, ինչպէս նաեւ բոլոր հանգուցեալ ՀՄԸՄ-ականներուն: Նոյն օրը ժողովին իր այցելութիւնը տուաւ Գանատայի Հայոց Թեմի առաջնորդ Գերաշնորհ՝ Տէր Բաբգէն Արքեպիսկոպոս Չարեան եւ իր սրտի խօսքն ու




օրհնութիւնը փոխանցեց: Երեք օրերու ընթացքին, ժողով սպառիչ կերպով քննեց բոլոր օրակարգները, արձարձուեցան մարզական ու սկստական տարբեր հարցեր եւ եղան շինիչ առաջարկներ, նկատի ունենալով որ կը գտնուինք ՀՄԸՄ-ի 100-ամեակի սեմին, եղան տարբեր առաջարկութիւններ՝ զայն նշելու արժանաւոր կերպով: Ժողովը բարձր գնահատեց 2015-2017 ՀՄԸՄ Գանատայի Շրջանային վարչութեան տարած գործունէութիւնը: Ժողովի աւարտին ընտրուեցաւ 2017-2019 երկամեայ տարեշրջանի

Շրջանային վարչութեան անդամները՝ Քոյր Լիոնի Սարմազեան, եղբ. Տանիէլ Մարկոբեան, եղբ. Յակոբ Սարգիսեան, եղբ. Հրաչ Նաճարեան, եղբ. Ռիչարտ Մելքոնեան, եղբ. Ճորճ Պայուզեան եւ եղբ. Պերճ Աթոյիկեան: Աւարտին եղան սրտի խօսքեր՝ մաղթելով նորընտիր Շրջանային վարչութեան եւ մասնաճիւղերուն յաջող երկամեայ տարեշրջան մը: Կիրակի յետմիջօրէին ժողովը հասաւ իր աւարտին ու փակուած կատարուեցաւ «Յառաջ Նահատակ» քայլերգով: Յոլեր Մկրտիչեան

## ՀՄԸՄ-ականի խոհեր

ՀՄԸՄ Գանատայի Շրջանային ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ 5-7 Մայիս 2017-ին, Մոնթրեալի մէջ, ուր համախմբուեցան ՀՄԸՄ Գանատայի ներկայացուցիչներ Գեմպրիճէն, Թորոնթօյէն, Լաւալէն, Մոնթրեալէն եւ Սենթ Գաթրիէն: Ժողովին աշխատանքները վարեցին ընտրեալ զոյգ ատենակապետները, ատենակապիրը, ատենակապետահին եւ անոնց կողքին կազմուեցան յանձնախումբեր: Հետաքրքրական էր, որ երեք տարբեր սերունդներ, նոյն երգիքին տակ միասին կ'աշխատակցէին, որ ՀՄԸՄ Գանատայի գնացքը հեզասահ ընթանայ: Այդ արդէն անուղղակի դաստիարակչական դասընթացը մըն էր բոլորին: Նոր եւ միջին սերունդը սորվեցաւ իր վեթերան եղբայրներէն աշխատանքը ինչպէս առաջ տանիլ, իսկ վեթերան սերունդը ակնատես եղաւ միջին եւ նոր սերունդին առողջ եւ յառաջդիմական ծրագիրներուն, ինչպէս նաեւ ունեցան հոգեկան բաւարարութիւն, թէ միութեան դեկը ապահովարար կրնան յանձնել յաջող սերունդներուն: Գանատան, ինչպէս նաեւ Միացեալ Նահանգները, առիթը տեղեկեցին նոյն յարկին տակ համախմբելու գանազան գաղութներու գաւակներ՝ Հայաստանէն, Լիբանանէն, Սուրիայէն, Եգիպտոսէ, Պարսկաստանէն, Յունաստանէն եւ այլ գաղութներէ, որոնք միասնաբար կը գործեն ՀՄԸՄ-ի դրօշին ներքեւ: ՀՄԸՄ-ական եղբայր մը

 Այցելեցէք Ս. Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցու Կիրակնօրեայ դպրոցի կայքէջը՝ [www.sourphagop.org](http://www.sourphagop.org)

 Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝ **(514) 284-7676**

**ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...**

**ԼԱՒԱԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ**

PERMIS DE QUÉBEC

3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

 Ghadir Meat & Restaurant  
T. 416-750-7404  
T. 416-750-7400  
1848 Lawrence Avenue E.  
Scarborough, ON M1R 2Y4  
E-mail: info@ghadirmeatmarket.com

 **Gary Chahinian**  
ABR., Broker of Record - Owner  
RE/MAX DIAMOND Realty Inc.  
W torontohomes.ca  
E gary@remaxdiamond.com  
**416-258-8892**

 **Noor Fine Food**  
Gourmet Mediterranean Cuisine  
1 High Meadow Place, Unit 9  
Toronto, Ontario M9L 2Z5  
Tel 416 745 3111  
Fax 416 745 9337

 **ANI Restaurant**  
905.761.6484  
1450 Clark Ave. West,  
Thornhill ON L4J 7R5

 Sutton  
Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage  
1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0  
**Annie Varbedian**  
Sales Representative  
Direct: (416) 918-3615  
Office: (416) 739-7200  
Fax: (416) 739-9367  
annievarbedian@hotmail.com  
www.suttongroupadmiral.com

 hearing aid source  
**Andre Ayvazyan HIS B.A.S**  
andre@HearingAidSource.ca  
416 754 4327 (HEAR)  
Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9

 **Crown Pastries**  
Fine Middle Eastern Pastries  
2086 Lawrence Ave East (Lawrence & Warden)  
Toronto ON. M1R 2Z5  
Tel 647.351.2015  
www.crownpastriesbaklava.com

 **I.D.A.**  
Part of the  family of pharmacies.  
Pharmacists  
**Sarkis Balian**  
**Vartan Balian**  
**Maral Abdalian Balian**  
**Cassandra Pharmacy Inc.**  
2040 Victoria Park Ave.  
Toronto, Ontario  
M1R 1V2  
Tel. : **416.449.2040**  
Fax: **416.449.2048**

 **ANI BAKERY**  
ԱՆԻ ՓՈԱՊԱՆ  
**Middle Eastern Pizza**  
**Lahmajoun**  
**ARSEN DABBAGHIAN**  
25 Howden Road, Unit #2  
Scarborough, Ontario M1R 3C8  
Tel: 416.285.7164



# Մոնթրեալահայուրիւնը անգամ մը եւս առաջնորդեց «Մարդկութեան համար քայլարշաւ»ը

Քաղաքապետ Գոտէր, Գախարարներ Ժոլի, Սեն Փիեռ եւ Վէյ, Ռոմէօ Տալէր եւ Սալիլ Տերթի միացան 2017-ի երթին



(Լուսանկարները Մայք Թաշճեանի)

Շաբաթ 27 Մայիսին կայացաւ Մոնթրէալի «Մարդկութեան եւ Ցեղասպանութեանց Կանխարգիլման համար Քայլարշաւ»-ի երրորդ երթը, տարբեր համայնքներէ եկած մեծաթիւ մասնակիցներով ու հանդամանաւոր հիւրերով:

Մոնթրէալի 375 եւ Գանատայի 150-ամեակներուն զուգահերիպող այս քայլարշաւը մէկ օղակն էր «Մոնթրէալ՝ Իրաւանց քաղաք» (Montreal - Rights city) միջոցառման: Այս անուան տակ ի մի բերուած էին երեք ձեռնարկներ, համագործակցութեամբ Քեպէզի հայ համայնքի միացեալ մարմին, մարդկային իրաւանց պաշտպան մեծագոյն կազմակերպութեան՝ Amnesty International-ին, Գոնգորտիա համալսարանի Montreal Institute for Genocide and Human Rights Studies(MIGS) բաժանմունքին եւ Raoul Wallenberg Centre for Human Rights հիմնարկին: Վերոնշեալ ձեռնարկներէն առաջինը իրագործուած էր Գոնգորտիա համալսարանէն ներս 26 Մայիսին, MIGS-ի կազմակերպած միօրեայ համագումարով:

Քայլարշաւի հաւաքը սկսաւ յետմիջօրէի ժամը 12:30-ին, Մոնթրէալի Գեղարուեստից Թանգարանի (MBAM) «Խաղաղութեան տաղար»-ի մուտքին: Այս ընտրութիւնը կատարուած էր թանգարանի վարիչներու խնդրանքով, որոնք իրենց կարգին միացած էին քայլարշաւի գործընկերներու շարքին:

Հաւաքի տեւողութեան ընթացքին, ՀՄԸՄ-ի, ՀԲԸՄ-ի եւ ՀԿՄ-ի փողերախումբերն ու սկաւտները, ինչպէս նաեւ ՀՅԳ ԳՊՄ պատանիները, իրենց նուագներով եւ դրօշներու դասաւորումով՝ ազդանշանը տուին մօտալուտ երթին: Այս միջոցին սկսաւ մասնակիցներու աստիճանական կուտակումը եւ զանազան հիւրերու եւ դէմքերու ժամանումը, որոնցմէ առաջինն էր Մոնթրէալի քաղաքապետ Տենի Գոտէրը: Ամէն տարուայ նման, քաղաքներու շարքերուն միացան ցեղասպանութիւն ասպրած կամ հալածանքներ ու կոտորած տեսած տարբեր համայնքներու խումբերը, ինչպէս՝ յունական, հրէական, գամպոնական, թուրք-նուստական, ասորական, քրտական եւ այլոց պատուիրակութիւնները: Նկատառելի թիւով կը մասնակցէին նաեւ Amnesty International-ի Քեպէզի մասնաճիւղի անդամներն ու գործիչները:

Քաղաքապետի, պաշտօնական ներկայացուցիչներու եւ Մոնթրէալահայ համայնքի հոգեւոր ու կազմակերպական առաջնորդներու գլխաւորութեամբ, քայլերթը ընթացաւ քաղաքակերտի կարգ մը բանուկ փողոցներէն ու պողոտաներէն, հասնելու համար Place du Canada հրապարակը: Հոս ի գործ դրուեցաւ տարբեր ելոյթներ ընդգրկող յայտագիր: Անոր բացումը կատարեցին օրուայ հանդիսավարներ՝ Սօսէ Պէօճեանն ու Հրակ Չինչինեանը: Ապա, քայլարշաւի կազմակերպիչ՝ Քեպէզի հայ

համայնքի միացեալ մարմնի անունով խօսք առաւ Նուշիկ Էլոյեան, որու յաջորդեց քաղաքապետ Գոտէրի ելոյթը:

Տուտուկահար Վաղօ Աղամեանի նուագի բաժնէն ետք, յաջորդաբար հանդէս եկան Amnesty International-ի Ընդհանուր Քարտուղար Սալիլ Շեթին, Քեպէզի միջազգային հարցերու եւ Ֆրանսախօսութեան նախարար Քրիսթին Աէն Փիեռը եւ MIGS-ի պատուոյ անդամ, ցեղասպանութեան կանխարգիլման գործիչ՝ նախկին ծերակուտական գործ. Ռոմէօ Տալէրը: Այս բաժնով, հանդիսավարները ընթացեցին նաեւ Քեպէզի վարչապետ Ֆիլիպ Գուլարի առաջած յատուկ ուղերձը:

Յայտագրի եզրափակիչ հատուածը սկսաւ ասորական համայնքէն՝ Օմիտա Նաուսի երգի կատարողութեամբ: Ան Վաղօ Աղամեան տուտուկին ընկերակցութեամբ մեկնաբանեց «Ատանայի ողբը» եւ ասորերէն կը մը՝ նուիրուած ասորական ցեղասպանութեան: Ապա, իր պատգամը փոխանցեց Գանատական Ժառանգի նախարար Մելանի Ժոլին: Անոր յաջորդեց ստրկութեան դէմ պայքարող մավրիտանիացի գործիչ Պիրամ Տահ Ապէյտի ելոյթը: Իսկ յայտագիրը իր լրումին հասաւ Գանատայի մօտ ՀՀ դեսպան Արմէն Եկանեանի խօսքով: Բոլորի ուղերձներու հասարակ յայտարարը կը հիմնուէր քանի մը պատգամներու շեշտագրումին վրայ՝ Պատմութեան արիւնոտ դասերը մտահան պէտք է ընել, մանաւանդ այս օրերուն երբ աշխարհը կ'անցնի դժուարին ու իրարամերժութեամբ յատկանշուող ժամանակահատուածէ մը: Աւելի քան երեք ժամանակն է միացնելու ուժերը՝ պայքարելու համար բոլոր անարդարութիւններուն եւ բռնութիւններուն դէմ, նամանակա՛նդ Մարդու հանդէպ Մարդու գործած Ռճիրներուն դէմ: Գանատայի եւ Մոնթրէալի փորձն ու աւանդները այս իմաստով՝ կրնան փարոսի դեր կատարել ամենուրեք:

Նոյն օրը երեկոյեան, տեղի ունեցաւ Montreal - Rights city նախաձեռնութեան երրորդ եւ վերջին միջոցառումը՝ կազմակերպութեամբ Amnesty International-ի: Այս ձեռնարկի ընթացքին շնորհուեցան Amnesty-ի տարեկան «Խղճմտանքի դեսպան»/ Ambassador of Conscience մրցանակները: Այս տարուայ մրցանակակիրներն էին՝ ամերիկացի աշխարհահռչակ երգչուհի Ալիշիա Քիզն ու Գանատայի տեղաբնիկներու իրաւունքներուն համար պայքարող գործիչներ՝ Մելիսա Մոլլըն Տիւփուի, Ուիսիա Լաուրիեր, Մելանի Մորիսըն, Սինտի Պաքսթոք, Տիլայա Սոնտրըզ եւ ծերակուտական Մըրրէյ Սինգլէր:

Տեղական մամուլն ու հեռատեսիլի լրատուական ծրագրերը անդրադարձան երեք միջոցառումներուն ալ:





SOURP KEVORK  
ARMENIAN CHURCH  
OF LAVAL PRESENTS

Ս. ԳԵՈՐԳ Է.Ա. ԵԿԵՂԵԾԻՆ  
ԿԸ ՆԵՐԿԱՑԱՑՆԷ



@Festivalarmenien  
@armfestlaval  
@festivalarmenien



Opening act  
Hrair Tarpinian  
**Comedy Night  
Part Deux**

**FRIDAՎ, JUNE 23**

Show Starts at 8pm - Happy Hour at 5pm - Tickets 30\$

**SATURDAՎ, JUNE 24**

Doors Open at 4pm - General Admission 20\$

**SUNDAՎ, JUNE 25**

Doors Open at 2pm - General Admission 10\$



ANTIC



PIERRE  
CHAMMASSIAN



ARMENCHIK



KOKO  
ASAYAN



JOELLE

With The Participation of  
**ANI DANCE  
ENSEMBLE**

♠♣♥♦ **FRIDAՎ NIGHT** ♠♣♥♦  
**POKER TOURNAMENT**



Registration at 6pm

- BUY-IN \$120
- CASH PRIZES
- OPEN BAR
- OPEN BUFFET
- PRO DEALERS

Saturday Night Intermission:  
**DJ PAUL KEYS**

**Info & Friday Night Tickets**

ADMIN: 450-688-6795  
LENA APRAHAMIAN: 514-928-9910  
2865 BOUL. SOUVENIR, LAVAL,  
QUEBEC (OLD CAVALIA LOCATION)  
WWW.FESTIVALARMENIENDELAVAL.COM


**FREE ADMISSION  
UNDER AGE OF 12**

(SATURDAՎ & SUNDAՎ)

**FREE ACCESS BALLOON  
RIDES**



THANK YOU TO ALL OUR SPONSORS





**CASSANDRA I.D.A. PHARMACY**

**ARMENIAN MEDICAL CENTRE & PHARMACY**

**PHARMACISTS**  
**SARKIS BALIAN, BScPhm, RPh**  
**MARAL BALIAN, PharmD, RPh**  
**VARTAN BALIAN, PharmD, RPh**

**ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ՝  
 ՊԱԼԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ**

**ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐ՝  
 ՄԱՐԱԼ ՊԱԼԵԱՆ  
 ՎԱՐԴԱՆ ՊԱԼԵԱՆ**

- Դեղագիրներու պատրաստութիւն՝ շաբաթական յատուկ տուփերու մէջ:
- Արեան ճնշման քննութիւն եւ հետեւողականութիւն՝ անվճար
- Շաքարախտի քննութիւն
- Դեղերը իրենց հասցէներուն առաքելու անվճար սպասարկութիւն
- Տարեցներու 10% զեղչ
- Կը յարգենք եւ սիրով կը կատարենք բոլոր ապահովագրական ընկերութիւններու պայմանները
- Walk-In Clinic բաց է շաբաթը 6 օր: Կրնաք բժիշկները տեսնել առանց ժամադրութեան:

**Դիմեցեք մեզի եւ պիտի դառնաք մեր մնայուն յաճախորդը:**

**Walk-in Clinic onsite: (416) 331-9111**


հասցէ՝ 2040 Victoria Park Ave. (Victoria Park & Cassandra)  
 Toronto, Ontario M1R 1V2 Tel: (416) 449-2040 Fax: (416) 449-2048





# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Մոնթրեալի «Սանահին» մասնաճիղը  
կը ներկայացնէ:



# SIRUSHO

Գանատայի մէջ առաջին մենահամերգ  
մասնակցութեամբ՝ Համազգայինի  
Անի զոյգ պարախումբերուն եւ Քնար երգչախումբին

Ուրբաթ 7 Յուլիս 2017, երեկոյեան ժամը 8-ին  
Collège Laval, Théâtre Marcellin-Champagnat • 1275 Avenue du Collège A, Laval, Qc H7C 1W8

Տոմսեր՝ \$60, \$40, \$25 (16 տարեկան եւ վար)  
Տոմսերու համար դիմել՝  
Սիլվի Մերճանեան 514-773-9391  
Վերա Բիգիրեան 514-333-7216 (երեկ. ժամը 9-էն ետք)



# ARMENIAN HERITAGE CRUISE®

**JANUARY 20-28, 2018 - 8 NIGHT CRUISE!**

- St. Kitts • Antigua
- Puerto Rico • Labadee

You must book with TravelGroup in order to attend our private Armenian parties!



INSIDE CABIN	\$1044
PROMENADE INSIDE	\$1094
OCEAN VIEW	\$1234
DELUXE BALCONY	\$1524
SUPERIOR BALCONY	\$1574

SUITES available upon request

3rd or 4th adult or child over 11 years old sharing same cabin \$730  
Children 11 years old and younger \$430

ALL RATES\* are per person, double occupancy. \*Government tax of \$108.36 per person is additional. Prices include all port charges and A/C A.A. (air station) fee. Deposit of \$250 per person due upon booking. Cruise is fully refundable until June 1, 2017. Rates and information subject to change at any time without notice.

For Reservations Contact:  
Local 561-447-0750  
Toll Free 1-866-447-0750 Ext 108 or 102  
125 SE Mizner Blvd., Suite 14  
Boca Raton, FL 33432  
AHC@travelgroupintl.com



SIBIL

HAROUT PAMBOUKJIAN



AKH'TAMAR DANCE ENSEMBLE



Call Arpi Ashkarian (Canada) (519) 748-2672

**Իւրաքանչիւր Գիրք**

**20\$**

ՀԱՄԱՅԻՆ ԱՍՏՈՒԱԾԱԶՆՈՒՄԶ

ՆԱՐԵԿ

Պատանիի Աստուածաշունչը

Կարէլի Է գնել Առաջնորդարանի Գրախանութիւն

514-858-1200  
pre.acy@armenianprelacy.ca

Le très distingué Docteur Krikor Sokhikian et le grand photographe et écrivain Ara O. Avedissian décédés tous deux récemment à quelques mois d'intervalle furent des amis fidèles pendant plus de 75 ans. Nous nous rappelons d'eux avec bonheur et amour.



The very distinguished Dr. Krikor Sokhikian and the great photographer and writer Ara O. Avedissian who both passed away recently, a few months apart, were good friends for over 75 years. We remember them fondly.



Marielle Deguire,  
Veuve - Widow of Ara O. Avedissian.



# Մոնրէալաբնակ արուեստագէտ Մկրտիչ Տարագճեան կը հարստացնէ «Մոն Ռուալալ»ի հանրային արուեստի հաւաքածոն իր «Ընթերցողը» քանդակով

«Ռէճինալտ Տաուսըն Գրադարան»ի հիմնադրութեան 50-ամեակին առիթով, օժտուած քանդակագործ Տր.Մ. Տարագճեան, Մոնրէալ քաղաքին կը նուիրէ պրոնզաձուլ մեծ չափի հոյակապ գործ մը՝ «Ընթերցողը»։ Ողջունելի յաւելում մը՝ Քաղաքի հանրային արուեստի հաւաքածոյին, որ կը գարդարէ գրադարանի գլխաւոր մուտքը «Կրահամ Պուլվար»ի եւ «Քինտրալէ Աւէնիւ»-ի անկիւնը։



Այս յատկանշական յուշարձանի բացումը տեղի ունեցաւ Մայիս 26-ին խուռներամ արուեստասէրներու ներկայութեան, որոնց շարքին հեղինակաւոր դէմքերու, ինչպէս ուժանիւթի նախարար՝ Փիէր Արգան, Գանատայի մէջ Հայաստանի լիազօր - արտակարգ դեսպան Ն. Վ. Պր Արմէն Եկանեան, Գանատահայ թեմի առաջնորդ՝ Բարգէն եպիսկոպոս Չարեան, Քաղաքապետ Ֆիլիբ Ռոյ, քաղաքապետութեան անդամ պր. Յարութ Շիթիլեան, եւայլն։ Սոյն ցուցասրահը անցեալ տարուայ ամրան ցուցադրած էր Տր. Տարագճեանի աւելի փոքր չափի գործերէն, որոնք գրուած էին իբրեւ մէկ մասը խիստ ժողովրդական եւ ժամանակից ցուցահանդէսի մը։ Անոնցմէ մէկը՝ «Ի՞նչ Նորութիւն» խորագրեալ քանդակը նախատիպը հանդիսացաւ այս կոթողին՝ «Ընթերցող»ին, որ ունի 1.7 մետր բարձրութիւն։

«Ասիկա հրաշալի քանդակ մըն է, որու թեման չէր կրնար աւելի համահունչ ըլլալ գրադարանի միջավայրին» իր բացման խօսքին մէջ ըսաւ քաղաքապետ Ֆիլիբ Ռոյ - աւելցուց. «Գրադարան իւրաքանչիւր այցելող պիտի դիմաւորուի այս պրոնզաձուլ յուշարձանով, որ գեղեցկօրէն կ'ըզելուզէ արտաքին ներդաշնակութիւնն ու ներքին բովանդակութիւնը այս ստեղծագործութեան։ Ոչ ալ այս գործը պիտի վրիպի անցորդներու ուշադրութենէն, ըլլան անոնք հեծանիւի վրայ, դէկին ետեւ թէ հետիտն»։

Ապա տեղի ունեցաւ ի պատիւ Տր.Մ. Տարագճեանի ընդունելութիւն մը, որ առիթ մը եղաւ ծանօթանալու արուեստագէտին հետ եւ հիանալու անոր ստեղծագործութիւններով, որոնք ցուցադրուած էին գրադարանի ցուցասրահէն ներս։

Մկրտիչ Տարագճեանի գործերը կարելի է դիտել այցելելով առցանց [www.taradjian.com](http://www.taradjian.com)

Ալէն Քոթէ  
Հասարակայնութեան Ռես  
Կապերու Բաժանմունք  
Մոն Ռուալալ



## Եռագոյնը՝ Մարքամի մէջ

27 Մայիս 2017-ին թորոնթոնացիները դարձեալ հաւաքուած էր Մարքամի քաղաքապետարան, Հայաստանի Անկախութեան 99-րդ ամեակին առիթով թորոնթոնի Հայ Դատի յանձնախումբին կազմակերպած Դրօշակի արարողութեան մասնակցելու։

Թորոնթոնացիները կ'ընկերակցէին Հայր Գեղարդ Մայրապոյն Վարդապետ Քիւսպէքեան, Մարքամի քաղաքապետ Frank Scarpitti, քաղաքապետի տեղակալ Jack Heath, Մարքամի շրջանային եւ տեղական խորհրդատուներ, ՀՅԴ «Ս. Թէ՛հլիրեան» կոմիտէի, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի եւ Հայ կեդրոնի յարկին տակ գործող միութիւններու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ ՀՄԸՄ-ի սկաւտները։

Հանդիսավարութիւնը կատարեցին ՀՕՄ-ի «Լափոյեան» երկրորդական վարժարանի ժ.Բ. կարգի աշակերտներ եւ ՀՅԴ ԳԵՄ-ի «Սիմոն Զաւարեան» մասնաճիւղի անդամներ՝ Կասիա Թաթիկեան եւ Իւան Մարտիրոսեան։

Հայր Գեղարդ օրհնեց եռագոյնը, որ Հայաստանի օրհներգին երգեցողութեամբ բարձրացուցեցաւ Մարքամի քաղաքապետարանին շէնքին առջեւ, ձեռամբ քաղաքական մասնակիցներուն, ՀՅԴ «Ս. Թէ՛հլիրեան» կոմիտէի հերթապահ Յակոբ Ծանապղեանի եւ ՀՄԸՄ-ի սկաւտներուն։


Ապա Թաթիկեան եւ Մարտիրոսեան փոխանցեցին մայիսեան յղթանակի պատմական ու անոր խորհուրդը, նշեցին 70 տարուան խորհրդայնացման սեւ օրերը հասնելով մինչեւ Հայաստանի վերանկախացումը, վեր առին Գանատա-Հայաստան մերձեցման կարեւորութիւնը եւ շնորհակալութիւն յայտնեցին Մարքամի քաղաքապետութեան ցեղասպանութեան 100-ամեակին առիթով «Forest of Hope» պուրակին համար։

Ապա շնորհակալական եւ քաջալերական խօսքեր փոխանցեցին Scarpitti եւ Heath։ Անոնք գրուածեցին Մեծն Թորոնթո շրջանի հայ գաղութին ժրջան աշխատանքը եւ վեր առին «Forest of Hope» պուրակին կարեւորութիւնը։ Scarpitti, Մարքամի քաղաքապետութեան անունով, Թորոնթոյի Հայ Դատի յանձնախումբին յանձնեց պաշտօնական շնորհակարգիր՝ Հայաստանի Անկախութեան 99-ամեակին առիթով։ Ընդհանուրագիրը ստանձնեց Յակոբ Ծանապղեան։


Ապա, Թորոնթոյի Հայ Դատի յանձնախումբին անունով հանդիսավարները շնորհակալութիւն յայտնեցին ներկայներուն եւ հրաւիրեցին հիւրասիրութեան։

Նշենք, որ եռագոյնը ծածանցեցաւ քաղաքապետարանի շէնքին առջեւ 27-28 Մայիսի ամբողջ շաբաթավերջին։

Թորոնթոյի Հայ Դատի յանձնախումբ



Թորոնթոյի «ՆՈՐ 3ԱՅ 3ՈՐԻՉՈՆ» յատագիրը կարելի է դիտել Շաբաթ առաւօտները ժամը 9:00-էն 10:00, իսկ Նոյն յայտագրի կրկնութիւնները Կիրակի օրերը առաւօտեան ժամը 7:00-8:00 եւ Երեքշաբթի օրերը կէսօրուայ ժամը 12:00-1:00 OMNI 1 կայանէն։



**ՀՕՄ-ի Մոնթրէալի ընկերային ծառայութեան գրասենեակը կ'աջակցի Գանատա ներգաղթած սուրիահայերուն**

ՀՕՄ-ի Մոնթրէալի ընկերային ծառայութեան գրասենեակի հիմնական առաքելութիւնը Մեծն Մոնթրէալի հայութեան ընկերային կարիքներուն հասնիլն է, շեշտը դնելով կարիքաւոր անհատներու եւ ընտանիքներու վրայ։ Իսկ վերջին շրջանին մեծ աշխատանք կը տարուի Գանատա նորահաստատ սուրիահայ ընտանիքներուն օգտակար հանդիսանալու համար։ Մեր գործունէութիւնը կ'ընդգրկէ տեղեկատուութիւն, ներգաղթողներու աջակցութիւն, տարեցներու եւ կարիքաւորներու օժանդակութիւն։

- Կ'օգնենք դիրացնելու անոնց համարկումը (intégration) եւ երկրի օրէնքներուն, սովորութիւններուն եւ քաղաքացիական իրաւունքներուն ու պարտաւորութիւններուն ծանօթացումը։
- Կ'ամբողջացնենք կառավարական փաստաթուղթերը դաշնակցային եւ նահանգային մակարդակներու վրայ։ Allocation familiale, crédit d'impôt pour les nouveaux arrivants։
- Նորեկները կ'արձանագրենք ֆրանսերէնի դասընթացներու։
- Կ'ընկերակցինք զանազան ժամադրութիւններու եւ կը միջամտենք աշխատանք գտնելու կապակցութեամբ։
- Նոր ժամանած եւ տակալին նոր հաստատուող ընտանիքներուն կը տրամադրենք խոհանոցային իրեր։
- La Corbeille գանատական բարեսիրական կազմակերպութեան հետ յատուկ համաձայնութեամբ գեղջուած գիներով ուտեստեղէն կ'ապահովենք կարիքաւոր ընտանիքներուն։

Հինգշաբթի օրերը ժամը 12:00էն - 4:00  
Հասցէ՝ 3401 Olivar Asselin, Montreal, Qc H4J 1L5  
Հեռաձայն՝ 514 514-335-2222

**«Հայ Դորիզոն» հեռատեսիլի յայտագիրը կը սփռուի հետեւեալ կայաններէն եւ ժամերուն՝**

<b>Videotron:</b> HD616 կամ SD16	Շաբաթ - 08:30 (առաջին սիւտում) եւ 1:30am Կիրակի - 3:30pm Երկուշաբթի - 08:00, 10:30pm, 1:30am Երեքշաբթի - 12:00pm
<b>Bell Fibe:</b> HD1216 կամ SD216	Չորեքշաբթի - 6:30am եւ 7:30pm Հինգշաբթի - 12:30pm, 12:30am Ուրբաթ - 3pm Ուղիղ արձակում՝ <a href="http://www.icitelevision.ca">www.icitelevision.ca</a>



# Դամբանական ողբացեալ ընկեր Սարգիս Զուրիկեանի Աղեքսանդրիա (Եգիպտոս), 21 Սեպտեմբեր 1931 - Գանատա, 20 Մայիս 2017

Սիրելի՛ սգակիր հարազատներ ու ցաւակից ներկաներ

Նպատակաւ 21 Սեպտեմբեր 1931-ին Աղեքսանդրիա (Եգիպտոս) ծնած, չորս օր առաջ մեզմէ առյաւէտ բաժնուած, բեմի մե՛ծ՝ սակայն խոնարհ ծառայ, սիրելի ընկերոջ՝ ողբացեալ ընկեր Սարգիս Զուրիկեանի կենսագրականը ընել չէ, այլ քաղաքիս Հայ Յեղափոխական Դաշնակցութեան «Միհրան Փափագեան» կոմիտէին, նաեւ Համազգայինի «Սանահին» մասնաճիւղի վարչութեան եւ բոլոր ընկերներուն սրտի խօսքն ու խորին ցաւակցութիւնը ձեռք յայտնելու դժուարին պարտականութիւնը ինձի վիճակուած է:

Դժուարին կ'ըսեմ, որովհետեւ բեմը իրեն ծառայողներուն համար հայրենիք մըն է կարծես, իսկ ընկերները՝ հայրենակիցներ: Հոն է, որ անոնք կը խնդան, կը խնդացնեն, կը յուզուին, կուլան, կը հրճուին, կը վիճաբանին, չեն համաձայնիր, կը համաձայնին: Վերջապէս, այն սեղմ կապը, որ կը ստեղծուի

անոնց մէջ, կը մնայ ցկեանս անքակտելի, եւ անոնցմէ մէկուն կորուստը այն ամուր շղթայէն օղակ մը կը պակսեցնէ, հոգեկան պարապութիւն մը կը ստեղծէ:

Մեր շատ սիրելի Սարգիսին բեմի արգասիքը լայնածաւալ է, այն կը սկսի իր երիտասարդ հասակէն, երբ գինք բեմին վրայ կը տեսնենք, բոլորիս ծանօթ դերասան Արփիար Վարդեանի հետ: Ան եղած է ե՛ւ դերակատար, ե՛ւ բեմադրիչ բազմաթիւ թատերախաղերու: Ան մանաւանդ մասնագէտն էր Moliere-ի կատակերգութիւններուն, ինչպէս՝ «Ագահ» եւ «Սգարէնի նենգութիւնները» բեմադրութեանց մէջ:

Գաղութիս կազմութեան սկզբնական շրջանին, երբ Համազգայինը կազմակերպ թատերախումբ չունէր, այն՝ կար «Շիրվանզադէ» կոչուած խումբ մը, ապա՝ ներգաղթած երիտասարդներէ կազմուած «Թատերասէրներ» անուամբ խմբակ մը, որ յետագային 1970-ական թուականներու սկիզբին վերանուանուեցաւ Համազգայինի «Պետրոս Ազամեան» թատերախումբ: Սարգիսն ու բեմ

մին ծառայող խենթերու փաղանգը, ի բացակայութիւն ներկայի ակմբային դիւրութիւններուն, թատերական գործունէութիւնը կը տանէին բնակարաններու կամ աշխատանոցներու մէջ: Ո՞վ մեզմէ կը մոռնայ «Սգարէնի նենգութիւններ»ուն փորձերը Սարգիսին մտերիմ ընկերոջ՝ Պերճ Աճեմեանի տպարանին մէջ, ուր ան մեզի կը սպասէր տաք թէյով եւ անուշեղէններով:

Սարգիսի Սգարէնի մարմնացումը եղած է անզուգական: Աղեքսանդրիոյ Lycée Français-ի թատերասրահին մէջ ներկայացման մը աւարտին Ֆրանսացի անձնաւորութիւն մը իրեն կը մօտենայ, մեծ եռանդով ձեռքը կը թօթուէ, յայտարարելով որ Ֆրանսայի մէջ իսկ ոչ մէկ արհեստավարժ դերասան Սարգիսի նման Սգարէնի դերը հրաշալիօրէն մարմնաւորած էր:

Կարելի չէ չմատնանշել նաեւ այն իրողութիւնը, որ մեր շատ սիրելի Սարգիսը իր բեմի ընկերներով թէեւ մասնագիտացած դերակատարներ չէին, սակայն, անոնց ներկայացումներուն որակը




նուազ չէր արհեստավարժ դերասաններու ներկայացումներէն: Տարբերութիւնը այն էր միայն, որ արհեստավարժ դերասանները կը ստանային նիւթական վարձատրութիւն, իսկ Սարգիսները կը գործէին սիրայօժար:

Վարձքը կատար, սիրելի՛ ընկերս, «Պետրոս Ազամեան» թատերախումբը կայ ու պիտի մնայ:


Հողը թեթեւ գայ վրադ:

Գարեգին Կիրիւնլեան



**ՅՕՍ-ի Մոնթրէալի Սօսէ մասնաճիւղի ընկերային ծառայութեան գրասենեակը բաց է ամէն հինգշաբթի ժամը 12:00-էն 4:00:**


Այլ օր ժամադրուելու համար հեռաձայնել 514 335-2222 թիւին:



**ՆՈՒՐԱՏՈՒՌԹԻՒՆ**

ՅՕՍ-ի Գանատայի շրջանը \$5,000 կը նուիրէ Գանատայի Կարմիր Խաչին՝ Զեպեգի եւ Օնթարիոյի հեղեղի աղետեալներու ֆոնտին:

Linda KHARABOYAN, LL.B., D.D.N.  
Notaire et conseillère juridique



Testament  
Mandat  
Procuration  
Financement  
Immobilier  
Attestations

Consultation personnalisée à domicile  
Տուներու այցելութիւն ըստ փափաքի

1430, boulevard Saint-Martin O., Laval (Québec) H7S 1M9  
T. 514.883.3498 F. 450.328.1258 E. linda@chezlenotaire.ca

**VIZUALIS**  
optométriste

DR SHANT DONABEDIAN

Centre d'Achat Fairview - Fairview Mall  
Pointe Claire  
514 695 2555 - VIZUALIS.CA

PHOTO  
*Cristal*

(514) 744 4313



Mariage - Portrait - Graduation  
Restauration - Commercial - Passeport  
Publicité - Lamination - Encadrement

Video - Reproduction

647 Boul. Decarie  
VSL-Montreal QC  
H4L 3L3  
photocristal@hotmail.com  
www.photocristal.com

**Assura Bien inc.**  
Cabinet en assurance de dommages et de services financiers

Ապահովագրական գրասենեակ

KRIKOR ABRAKIAN VAHAN MATOSSIAN

970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc. H4T 1W7  
T: 514.903.3999

**RITA BAGHDASSARIAN**  
Conseillère en Sécurité Financière  
Revenu Garantie Viager

COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELI) • CRÉATION D'HÉRITAGE •  
REER FERR RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ •  
ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE  
& COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT

3820, boul. Lévesque Ouest, Bureau 101,  
Laval Qc. H7V 1E8  
Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262  
ritabagh@yahoo.com

**TAXI  
MIRABEL  
450-430-2650**

Taxi Mirabel Հայկական հաստատութիւնը կարիքը ունի 20 հայ թարսի վարորդի Միքսակ շրջանին մէջ: Հաճեցէք հեռաձայնել Արային (514) 979-1317 թիւին:

Taxi Mirabel needs Mirabel area taxi drivers with pocket number, besoin de chauffeur de taxi. **Call/Appelez: (514) 979 1317**



RE/MAX  
RE/MAX 3000 inc.  
Agence immobilière

**Elie Berberian**  
Courtier immobilier / Real Estate Broker  
C 514.519.3543  
B 514.333.3000



ONGLES CAROLE  
HAMPARTSOUMIAN

POSE D'ONGLES  
RÉSINE ET POUDRE  
MANICURE & PÉDICURE AVEC GEL  
RECOURVEMENT SUR ONGLES  
NATURELS

Առողջ եղունգներու իննամիջի համար հեռաձայնել՝  
514 941-0014 LAVAL

**KRIKOR MAROUNIAN RLU**  
Independent Financial Security Broker

Life Insurance • Disability & Critical Illness Insurance  
Group Insurance • Pension Plans  
Travel/Visitor Medical Insurance

11820 General Giraud  
Montreal, QC H4J 2H6  
Res: (514) 332-7021  
Fax: (514) 332-7376  
Cell: (514) 927-2666  
krikormar@gmail.com

FIVE STAR  
**ELECTRIQUE**  
CINQ ÉTOILES

SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING  
RESIDENTIAL-COMMERCIAL

**BEDROS NALPATIAN**

442, LA RIVIÈRE, LAVAL, QC.  
TEL: 514-497-5155 FAX: 450-689-3997  
E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM



**SOSIE DERMESSESIAN**  
MORTGAGE AGENT  
LICENCE #M12001830

716 Gordon Baker Road,  
Unit 204A, Toronto  
Ontario M2H 3B4

**CENTUM**  
Metrosapp Wealth Solutions Inc.  
License # 12147

Mortgage programs for new comers to Canada  
New purchases  
Refinancing  
Second mortgages  
Self employed  
Low credit score  
Access to top lenders including private lenders

416.662.6650 cell  
centum.ca/sosie\_dermessesian

180, rue Fleury ouest  
Montréal, Qc, H3L1T5

T 514.382.7222  
F 514.381.1818

**ALINE BEKEREJIAN**  
NOTAIRE - NOTARY

aline.b@notarius.net  
www.abnotaires.com

Նոտար եւ Իրաւաբանական Խորհրդատու՝ Ալին Բեքերեճեան



**ԳՐԱԴՐՈՒԱԾ ԹՈՒՐԱԳԱՆ**

**ՀՕՄԻ ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԻ 23-ՐԴ ՊԱՏԳԱՄԱՆՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ**  
30 Յունիս, 1-2 Յուլիս 2017 - Մոնթրեալի Հայ կեդրոնէն ներս

**ՀՄԸՄ Լաւալ**  
Երկուշաբթի 10 Յուլիս 2017  
**Հաւաքոյթ Լաւալի Պարունեան սրահէն ներս**  
ՀՄԸՄ Լաւալի գործունէութեան եւ 100 ամեակի առթիւ  
**Օգոստոս 26-27 Դաշտահանդէս**

**ԹՈՐՈՆԹՕ**

Շաբաթ 28 Հոկտեմբեր 2017  
Թորոնթոյի Հայ Օգնութեան Միութեան «Ռուրիմա» մասնաճիւղ  
**ՏՈՂՄԻԿ ՕՐ** - 24-րդ - Զօնուած՝  
Նախիջեան նահանգին եւ 5 գաւառներուն՝  
Գողթան, Երնջակ, Հահուկ, Նախիջեան եւ Շարուր

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ**

Ողբ. **ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ՔԷՆՏԻՐՃԵԱՆԻ** մահուան Ա. տարելիցին առթիւ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի 17 Յունիս 2017, Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի: Սգակիրներ՝ Տիար Սուրէն Քէնտիքեան, Տիկ. Լորան Առաքելեան եւ զաւակներ, Տէր եւ Տիկ. Լեւոն եւ Սեւան Առաքելեան եւ զաւակներ, Տէր եւ Տիկ. Զարէն եւ Մարօ Քէնտիքեան եւ զաւակներ, Տէր եւ Տիկ. Պերն եւ Յասմիկ Խըրլաբեան եւ զաւակներ, Տէր եւ Տիկ. Վաչէ եւ Իսկուհի Քէրբէգեան եւ զաւակներ, Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Ժիւլիէթ Ճանպագեան, Տէր եւ Տիկ. Գեորգ եւ Մարի Սագարեան, Տիկ. Արմիկ Պետրոսեան եւ զաւակներ, եւ համայն Քէնտիքեան, Առաքելեան ընտանիքներ:

**ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ**

Այսու կուգանք մեր խորին շնորհակալութիւնները յայտնելու Բարգէն Արք. Զարեանին, Խաժակ Արք. Յակոբեանին, Սուրէն Արք. Գաթարոյեանին, Գառնիկ Աւագ Քիւնյ. Գոյունեանին, Գանատայի Ազգային Առաջնորդարանին եւ բոլոր անոնց որոնք անձամբ, հեռաձայնով, ծաղկեպսակով կամ նուիրատուութեամբ ցաւակից եղան մեր սուգին, մեր սիրելի ամուսնոյն, հօր եւ մեծ հօր **ԵՐՈՒԱՆԴ ՊԱՍՄԱՃԵԱՆԻ** մահուան առթիւ: Սգակիրներ՝ Անի Պասմեան եւ զաւակունք:

**ԲԱՐԻ ԱՊԱՔԻՆՈՒՄ**

ՀՕՄԻ Գանատայի Շրջանային վարչութիւնը բարի ապաքինում կը մաղթէ վարչական ընկերուհի **ՍԻԼՎԱ ՊԷՏԻՐԵԱՆԻ**ին:  
Համազգային «Սանահին» մասնաճիւղի վարչութիւնը բարի ապաքինում կը մաղթէ ընկի. **ԱՐՄԷՆՈՒՀԻ ՏԷՄԻՐՃԵԱՆԻ**ին:

**ՑԱԻԱԿՑԱԿԱՆ**

Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Մոնթրեալի «Սանահին» մասնաճիւղի վարչութիւնն ու Գանատայի Շրջանային Վարչութիւնը խոր ցաւով կը գուժեն մահը վաստակաւոր դերասան եւ բեմադրիչ՝ ընկեր **ՍԱՐԳԻՍ ԶՈՒՐԻԿԵԱՆԻ**ին: Ան քառասունէ աւելի տարիներ իր սիրայօժար եւ աշխոյժ մասնակցութիւնը բերած է «Պետրոս Աղամբան» թատերախումբին, բեմադրելով աւելի քան տասը թատերախաղեր: Համազգայինի մէջ իր թողած արձանն ու յիշատակները յաւիտեանս դրոշմուած պիտի մնան մեր պատմութեան ու մեր սրտերուն մէջ: Թող հողը թեթեւ գայ սիրելի ընկերոջ վրայ, եւ Աստուած մխիթարութիւն տայ իր ընտանիքին:

**ՑԱԻԱԿՑԱԿԱՆ**

ՀՄԸՄ Լաւալ վարչութիւնը ցաւակցութիւն կը յայտնէ եղբ. Սարգիս Գաւուրեանին, իր քրոջ՝ ողբ. **ՍԵՂԱ ՄԱՐՏԻՐՈՍ ԳԱՆՈՒՔՅԵԱՆԻ** մահուան առթիւ:

**ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՌԵՇԱԴՐՈՒԹԵԱՆ**  
«ՀՈՐԻԶՈՆ» որբէէ ձեռով եւ որբէէ ժամանակ պատասխանատու չէ լոյս տեսած ծանուցումներու բովանդակութեան:  
«ՀՈՐԻԶՈՆ» իրաւունք ունի ընդունելու կամ մերժելու որբէէ ծանուցում կամ յայտարարութիւն:  
ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐԸ Կ'ընդունինք միայն գրաւոր, որոնք խմբագրութեան պէտք է յղուին թերթի լոյս ընծայման ժամկէտէն առնուազն 7 օր առաջ:

**ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ**  
«Հորիզոն» յղուած թղթակցութիւններն ու յղուածները պէտք է գրուած ըլլան ընթերցելի ձեւով, նախընտրաբար մեքենագրուած կամ Ե-մատակի մեր հասցէին յղուած: Անստորագիր եւ առանց հասցէի գրութիւնները նկատի չեն առնուիր: Խմբագրութեան յանձնուած նիւթերը հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:  
Հրատարակուած յղուածներու մէջ տեղ գտած կարծիքները անպայմանօրէն չեն ներկայացներ խմբագրութեան տեսակետը:  
Յապաղած թղթակցութիւնները չեն հրատարակուիր:  
Բոլոր թղթակցութիւնները ենթակայ են խմբագրման եւ վերամշակման:  
Ստացուած յղուածներն ու թղթակցութիւնները հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը վերապահուած է խմբագրութեան:

**ՊՈԼՍԱՅԱՅ ԳԻՄՆԱՐԿ  
FONDATION BOLSAHAY**  
**ՊՈԼՍԱՅԱՅ ՄԵԿՎՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՆ**  
ԳՐԱԴՐՈՒԾ ՕՐ  
Պոլսահայ Մշակութային Միութեան Հիմնարկութեան  
յիսունամեակի հանդիսութիւններու շարքէն  
Եզրափակիչ պարահիշակ ճաշկերոյթը տեղի պիտի ունենայ  
**Շաբաթ, 14 Հոկտեմբեր 2017-ի երեկոյեան,**  
միութեան «Հրանդ Տիկ» սրահին մէջ:  
Կը խնդրուի չխաչածել

**ALINE BEKEREJIAN**  
NOTAIRE • NOTARY  
**ՆՈՏԱՐ ԱԼԻՆ ՊԵՔԵՐԵՃԵԱՆ**

Achat	Ստեւար	Purchase
Hypothèque	Անշարժ Կալուածք	Mortgage
Refinancement	Վերաֆինանսատրում	Refinance
Mandat	Պատուիր	Mandate
Testament	Կտակ	Will
Succession	Կալուածք	Estate
Marriage	Ամուսնութիւն	Marriage
Procuratation	Փոխարկորագիր	Power of Attorney

180, rue Fleury ouest  
Montréal, Qc, H3L1T5  
T 514.382.7222  
F 514.381.1818  
aline.b@notarius.net  
www.abnotaires.com

Տառայութիւնները կը մատուցուին Արաբերէն, Հայերէն, Ֆրանսերէն, եւ Անգլերէն լեզուներով:

**Այցելեցէ՛ք Թորոնթոյի ամենօրեայ վարժարանի բարեկարգուած կայքէջը՝ / Visit our new website**  
**www.arsarmenianschool.ca**

**Այցելեցէք Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան կայքէջը՝**  
**www.canada.mfa.am**

**horizon**  
HORIZON  
Hebdomadaire arménien  
Armenian Weekly  
Publié par / Published by  
Les Publications Arméniennes  
(1991)  
3401, Olivar-Asselin  
Montréal, Québec  
Canada H4J 1L5

**Abonnement annuel / Yearly subscription**  
Canada  
2<sup>e</sup> classe - 2<sup>nd</sup> class: \$80 plus applicable taxes  
1<sup>re</sup> classe - 1<sup>st</sup> class: \$95  
États-Unis / USA  
1<sup>re</sup> classe - 1<sup>st</sup> class: \$95 US  
Ailleurs / Elsewhere  
1<sup>re</sup> classe - 1<sup>st</sup> class: \$125 US

**Administration / Publicité**  
Sylva Eshradjian-Bachekjian  
(General Manager)  
Tél.: (514) 332-3757  
Télécopieur/Fax (514) 332-4870  
E-Mail: sylvab@horizonweekly.ca  
Courrier de deuxième classe  
/No. 40065294 / Second class mail  
Dépôt légal: bibliothèques nationales du Québec et du Canada - ISSN 0708580X

Գրիգոր Հորոնեան, (416) 494-1921  
Ժազ Վարպետեան, (416) 722-9225

Լուսանկարիչներ՝ Արմեն Ալեմեան, Մայք Թաշճեան, Իշխան Ղազարեան, Գարուստ Պապեան, Վազգէն Տէլիքմէնթաշ,

Financé par le gouvernement du Canada  
Funded by the Government of Canada  
**Canada**





Innovation that excites

NISSAN

FACTORY APPROVED EVENT

GROUPE NISSAN GABRIEL

# MICRA SV

WITH AUTOMATIC TRANSMISSION

STARTING AT

**\$14,048\***



Micra SR shown\*



**FACTORY APPROVED FEATURES**



BLUETOOTH® HANDS-FREE SYSTEM<sup>1</sup>



POWER HEATED OUTSIDE MIRRORS



INTEGRATED KEY WITH REMOTE KEYLESS ENTRY



AIR CONDITIONING



CRUISE CONTROL



VEHICLE DYNAMIC CONTROL<sup>2</sup> WITH TRACTION CONTROL SYSTEM



60/40 SPLIT FOLD-DOWN REAR SEATS

**NISSAN**  
**GABRIEL**  
JEAN-TALON

3500, rue Jean-Talon O.  
Montréal, QC H3R 2E8  
**514 509-7777**  
nissangabrieljeantalon.com  
◀ OPEN SATURDAYS ▶

**NISSAN**  
**GABRIEL**  
ANJOU

7010, boul. Henri-Bourassa E.  
Anjou, QC H1E 7K7  
**514 324-7777**  
nissangabrielanjou.com  
◀ OPEN SATURDAYS ▶

\*Visit Nissan Gabriel Jean-Talon or Nissan Gabriel Anjou for more details.



BARRY



KAREN



GARO

# KAZANDJIAN



514  
**333-3000**  
DEMANDEZ UNE ÉVALUATION GRATUITE



131 Ch. Bates  
Mont-Royal  
à partir de  
288 2055 +TPS/TVA



EXPERTISE

EXPÉRIENCE

EXCELLENCE

ÉQUIPE KAZANDJIAN .com

CLASSÉS PARMI LES MEILLEURS COURTIER RE/MAX AU MONDE  
RANKED AMONGST THE HIGHEST PERFORMING RE/MAX BROKERS IN THE WORLD

KAZANDJIAN REALTY .com

AGENCE IMMOBILIÈRE RE/MAX 3000 | 9280 L'ACADIE, MONTRÉAL, QC, H4N 3C5